ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,հեռ.՝ (+374 11)514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-23017

«27» 09 2021 թ.

«ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Հ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ
ք. Երևան, Սարի թաղ 9 շենք/տ/80

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԻՄՈԲԻԼԻԱՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) միջև 14.01.2021 թվականին կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Երևանի քաղաքապետարան 16.09.2021 թվականին մուտքագրված Ձեր համապատասխան գրությամբ տեղեկացրել եք, որ ընկերությունը պայմանագրով սահմանված պայմաններով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-6» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքը չի կարող մատակարարել և խնդրել եք լուծարել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հիմք ընդունելով ընկերության գրությունը՝ վերոնշյալ պայմանագիրը լուծարելու վերաբերյալ, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի, պայմանագրի մնացորդային քանակի մասով,

հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն 2251570 ՀՀ դրամ գումարի չափով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն «Էվոկաբանկ» ՓԲԸ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից (որակավորման ապահովում՝ 479873 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում՝ 319915 ՀՀ դրամ) Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությանը, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129